Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 4

# ՎԵՐԱՀՍԿԻՉ ԲՈՒԴԿԱ

ՊԻԵՍԱ ՄԵԿ ԳՈՐԾ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1931

1.71
-23

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 4

СА 32-1 / 2238
3 Ժամկ
19 NOV 2010
30 SEP 2006

Պ. ՄԱՅՍԿԻ

# ՎԵՐԱՀՍԿԻՉ ԲՈՒԴԿԱ

Պիես մեկ գործողությամբ

Փոխադրություն ԱՐՇ. Տ.-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

Библиотека Института Востоковедения Академии Наук

ՊԵՏՀՐԱՏ 1931 — ՅԵՐԵՎԱՆ

24 JUN 2013

12068

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1611
ՊԱՏՎԵՐ 2185
ԳՐԱՌԵՊ. 6381 (Բ)
ՏԻՐԱԺ 4000.

3678-82

Պիեսի թեման—հանդիպական արդֆինպլան և համաձայնություն:
Դեկորներ—վերահսկիչ բուդկա:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ

ԲԱՆՎՈՐ
ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ
ԴԻՐԵԿՏՈՐ
ԼԵՏՈՒՆ
ՍԻՄՈՒԼՑԱՆՏ
ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ԱՐԴՖԻՆՊԼԱՆ
ՀԱՐԲԵՑՈՂ
ՎՆԱՍԱՐԱՐ
ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆ
ԳՈՐԾԱՐԿՈՄ

Բեմում—վերահսկիչ բուդկա:

Բուդկայի առաջ անց ու դարձ է անում ԲԱՆՎՈՐԸ, թակիչով ծեծելով:

ԲԱՆՎՈՐ.— Գործարանը իմն է հիմի, ասելը—յես,
Յես էլ պետք է լինեմ արթուն—սրատես,
Վոր էլ այնտեղ մուտք չունենա սիմուլյանտ,
Պրոգուլշչիկ կամ հարբեցող ու լենտյան
Յեվ այլ տիպի վնասարար էլեմենտ:
Կա՛ց: Պրոպուսկ ունե՞ս: Պրոպուսկ եմ ասում: Կանգնի՛ր, կկրակեմ: (Նշան է բռնում թակիչով և արձակում: Վազ է տալիս պարիսպի մյուս կողմն ու քարշ տալով բերում է ԴԻՐԵԿՏՈՐԻՆ): Դո՞ւք եք, ընկեր դիրեկտոր. չճանաչեցի: Այդ ինչո՞ւ յեք չան նման պատերով բարձրանում: Չե՞ վոր վերահսկիչ բուդկա կա:

ԴԻՐԵԿՏՈՐ.— Ո՛խ, վերահսկիչի մասին մի ասեք ինձ, դա այնպե՛ս հիշեցնում է վերահսկիչ հանձնաժողովը:

ԲԱՆՎՈՐ.— Բայց ինչպես վախեցել եք: Դեմքիդ գույն չկա:

ԴԻՐԵԿՏՈՐ.— Ի՞նչ: Դեմքի՞: Վո՞ր դեմքի: Կուսակցակա՞ն: Ինձ վերահսկիչ հանձնաժողովում էլ ասացին, վոր յես կուսակցական դեմք չունեմ: Մի՞ թե ճշմարիտ է:

ԲԱՆՎՈՐ.— Յերդվում եմ հնդամյակով, ճշմարիտ է:

ԴԻՐԵԿՏՈՐ.— Իսկ յես Մարքսով յերդվեցի, սակայն չհավատացին: Բայց դու կարծեմ ինձ վրա կրակեցիր: Չե՞ վոր կարող էյիր սպանել:

ԲԱՆՎՈՐ.— Փուչ կրակոց եր, վոնց վոր մեր գործարկոմի ինքնաքննադատությունը: Ղարմաղալը շատ—բայց վոչ մի օգուտ: Բայց և այնպես ի՞նչն է հարկադրում ձեզ պատերով բարձրանալ:

ԴԻՐԵԿՏՈՐ.— Հանդիպումներից եմ վախենում: Այս կողմերում (շշնջում է ականջին) հանդիպական արդֆինպլանն է ման գալիս:

ՌԱԴԻՈ — Ալլո՛։ Ալլո՛։ Հանդիպական արդֆինալը հաշվով ..... ......(այսինչ—տալ այն գործարանի կամ ձեռնարկության անունը, ուր տեղի է ունենում ելույթը) գործարանին։

ԴԻՐԵԿՏՈՐ — Հաստա՛տ։ Յես այդպես էլ գիտեյի։ Վազում եմ, վազում եմ կաբինետ։ (Շտապելուց կորցնում է վարդագույն ակնոցները։ Յերգում է) «Պետք չէ հանդիպում, հերիք է, վերջ տանք ...» (Դռներում ընդհարվում է ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀՈՒ հետ)։

ԴԻՐԵԿՏՈՐ — Ո՛յ, առանց ակնոցների յես վոչինչ չեմ տեսնում։ (Բռնում է ավելը։ Սարսափահար) Ավե՛լ։ Սա մի իմաստ ունի։ (Փախչում է)։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — (Յերգում է)

Ավելը յերբ մեջ է գալիս—
Դա շատ խորը իմաստ ունի...
Ով լալկան է, հավատ չունի,
Կասկածում է արդֆինալին,
Ես ավելը մեկիկ-մեկիկ
Նրանց կածի աղբի յաշչիկ։
Դուր ավել կա, էնտեղ մաքուր,
Չկա էնտեղ աղբ ու մրուր։

(Բարձրացնում է ավելը)

Ակտիվիստ է ես ավելը,
Արդֆինալի մեր պայքարում
Ինչ կեղտ տեսավ—իսկույն քանդում,
Հանում է դուրս, մաքրում, թափում։
Դե ուրեմն ես դաղդղան
Ավելին տանք դատաստանը
Ծույլանբանի, պրոգուլշչիկի,
Սիմուլյանտի, հարբեցողի,
Զվողների, գջլողների
Յեվ այլ տեսակ հերոսների
Ծելքի բերի կամ թե ընդմիշտ
Գործարանից քոքը կտրի։
Ավելը յերբ մեջ է գալիս—
Դա շատ խորը իմաստ ունի...
Ով լալկան է, հավատ չունի,
Ով քանդում է արդֆինալն,
Ես ավելը մեկիկ-մեկիկ,



Նրանց կածի աղբի յաշչիկ։
Նու, յերգը յերգ, բայց յես պիտի կորչեմ։

ԲԱՆՎՈՐ — Դո՞ւ։ Ինչո՞ւ դու կորչես։ Այ, մեր վաստակավոր պրոգուլշչիկ.... (տալ տեղի պրոգուլշչիկի անունը) իսկապես վոր կորչելու պետք է, բայց տեսնո՞ւմ ես, նա ամենեվին չի շտապում։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — (Ավելում է) Մի որվա մեջ ինչքան կեղտ ա հավաքվում։ Ինչ անպետք բան ասես, վոր չկա ըստեղ։ Օրինակ, ակնոցներ։

ԲԱՆՎՈՐ — Ի՞նչ ակնոցներ։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Վարդագույն։

ԲԱՆՎՈՐ — Ա՛, դա դիրեկտորի ակնոցներն են։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Ասա խնդրեմ, ինչո՞ւ մեր դիրեկտորը վարդագույն ակնոց է ծածկում։

ԲԱՆՎՈՐ — Պարզ է թե ինչու...Վորպեսզի ամեն ինչ վարդագույն տեսնի։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Յես վոր ծածկեմ, ի՞նչ կլինի։

ԲԱՆՎՈՐ — Այն ժամանակ յես քեզ վարդագույն կերեվամ։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — (Ծածկում է ակնոցը) Ա՛խ, ինչ սիրունիկն ես դու։ Ուղղակի թամաշա։ Իսկ, ա՛յ, նա (ցույց է տալիս հանդիսականներից մի ծերունու) ինչ թուխ յերիտասարդ է։ Մարդ հա ուզում է մտիկ տա։

ԲԱՆՎՈՐ — Դա նշանակում է ոպտիկական խաբեյություն։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Այսինքն, յերբ խաբում են ոպտով։ Բայց մասնավոր առեվտրականը խաբում է հատով։ Օրինակ, կողակը ծախում է իշխան ձկան տեղ։

ԲԱՆՎՈՐ — Նու, այդ դեպքում դա կնշանակի հատով խաբեյություն։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Ինչ եյի ուզում հարցնել։ Հա։ Վո՞րտեղից կարող եմ բանջար առնել։

ԲԱՆՎՈՐ — Բանջա՞ր։ Մեխանիկական ցեխում ինչքան ուզես, կա։ Գնա լոդր Պողոսի մոտ (կամ ուրիշ անուն)։ Նա յերկու ամիս է իր ստանոկը չի մաքրել, այնպես վոր ամբողջովին բանջար է կանաչել։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Իսկ թթու վո՞րտեղ կլինի։

ԲԱՆՎՈՐ — Թթո՞ւ։ Արտադրական հանձնաժողովում չա՛տ... Այնտեղ բանվորական բոլոր առաջարկությունները թթու յեն դնում։

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ — Շնորհակալ եմ խորհուրդների համար։

ԲԱՆՎՈՐ.— Անուշնե՞ր։
ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Երեկ ժողով եյի գնացել։ Զեկուցողն ասում եր, վոր «արտադրական շեղագիծն անկման տրամադրություններ ե ցույց տալիս»։ Թե դա ինչ շեղագիծ ե, վոր սպանես, չեմ հասկանում։
ԲԱՆՎՈՐ.— Յես ել գլխի չեմ ընկնում։ Հարկավոր ե մեր գործարկոմից հարցնել։ Գործարկոմը լավ կիմանա, վորովհետեվ ինքը հենց աշխատում ե «յա բախտի»։
ՌԱԴԻՈ.— Ալլո։ Ալլո։ Լսեցեք, լսեցեք։.... (այսինչ—տալ այն գործարանի կամ ձեռնարկության անունը, ուր տեղի յե ունենում յելույթը) գործարանի գործարկոմն աշխատում ե առանց ծրագրի— «յա բախտի»։ Դրա հետեվանքով ընթացիկ տնտեսական տարում (կամ յեռամսյակում) արդֆինպլանը կատարվել ե միայն ութսուն յոթ տոկոսով (տալ տվյալ ձեռնարկության կատարման տոկոսը)։ Կուսակցական բջիջը և առաջավոր բանվորները ահազանգ են հնչեցնում։ (Ռազմական ահազանգի սիգնալ)։ Բազմապատկած յեռանդով, մասսաների ենտուզիազմի մոբիլիզացիայով ծածկենք ամոթալի ճեղքվածքը։ (Ահազանգի սիգնալ) Հանդիպական արդֆինպլանը պիտի հասնի յուրաքանչյուր ստանոկի, յուրաքանչյուր բանվորի (ահազանգի սիգնալ)։
ՀԱՆԴԻՊԱԿԱՆ.— Գալի՛ս եմ։
ԲԱՆՎՈՐ.— Ընկեր, պրոպուսկ։
ՀԱՆԴԻՊԱԿԱՆ.—

Իմ անցագիրն ստուգել,
Ուշացել եք դուք, ընկեր,
Յես ծնվել եմ, յես սնվել
Աշխատանքի բոցից վառ,
Յեվ բերում եմ ահա յես
Ստանոկին, ցեխերին
Աստղերի պես պարզ թվեր,
Լեռների պես վեհ թվեր։
Յես պայթյուն եմ, ճայթյուն եմ
Բոլոր նրանց—ով քնել,
Ով «գործերի» փոստայնում
Խճճվել ե, բուն հյուսել,
Ով չի վոստնել, չի տեսել
Հարվածային կուռ բանակ։



Ով ուժը մեր չի չափել—
Վոչ որերի թափը այս,
Ով պլանը հնգամյա
Չի հասկացել, չի պարզել,
Կամ ճիշտ ասած—հեղհեղուկ,—
Նրա պոչից քարշ յեկել։
Վստահ իրենց ուժերին,
Բանվորները միակամ
Ստեղծել են ինձ, վոր գամ,
Վոր մեր յերկրին այսուհետ
Տամ շատ շուգուն, շատ յերկաթ,
Շատ քարածուխ ու պողպատ։
Յեկա ահա կամքով ձեր,—
Անցագիրը ճիշտ ե իմ,
Թեև չունեմ յես մանդատ,
Վոչ բազմազան այլ թղթեր։
Ու գնում եմ ահա յես—
Գնում անշեղ, սրատես—
Դեպի ամեն ստանոկ,
Դեպի ամեն մի բանվոր։

ԲԱՆՎՈՐ.— Ախպեր ջան, դե հենց սկզբից էլ կասեյիր եղպես։ Արի արի։
ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Միայն թե այսոր դժվար թե ամեն մի բանվորի հասնես, ընկեր Հանդիպական։ Հըլա մտիկ արա, մենակ պրոգուլշչիկների թիվն ինչքան ա։ Ինքդ հաշվիր։ (Կարդում ե պրոգուլշչիկների ցուցակն ըստ ցեխերի) Ես հլա սրանք... Հլա սիմուլյանտներին ել հաշվի արա (ասում ե սիմուլյանտների անունները)։ Լետուններն ել եկողը չեն—նրանք հասր ենտեղ կլինեն, վորտեղ մի արասի ավել են տվել (ասում ե անունները)։
ԲԱՆՎՈՐ.— Մի լավ բան եմ մտածել։ Մենք նրանց բոլորին իսկույն կհավաքենք այստեղ։
ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Այդ ինչպե՞ս կհավաքես նրանց։
ԲԱՆՎՈՐ.— Շատ պարզ։ Մեկ վոր ասում եմ կհավաքեմ—նշանակում ե, կհավաքեմ։ Յես դրա սեկրետը իմանում եմ։ Դու, ընկեր արդֆինպլան, գնա գործարան, մինչև յես նրանց հավաքեմ վերահսկիչ բուդկա։
ՀԱՆԴԻՊԱԿԱՆ.— Նու, աշխատիր, աշխատիր։ Յես ժամանակ չունեմ (գնում ե)։

ԲԱՆՎՈՐ.— Որի՞ց սկսենք:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Սկսիր լեռուններից: Նրանք թևավոր են, բոլորից շուտ կթռչեն կգան:

ԲԱՆՎՈՐ.—Փորձենք: (Կախ է տալիս ցուցանակ «ԲԱՐՎԱՆՍԱՐԱ» մակագրությամբ) Այս ցուցանակի վրա, գլխովս յերաշխավորում եմ, կգան:

Սը՛ս՛սս... Հենց այդ է, որ կա: Պատրաստ է:

ԼԵՏՈՒՆ.— (Թևերին մակագրություն «փոխադրածախս»)

Մեկ է ինձ համար, թե ուր աշխատեմ,
Այսոր այստեղ եմ, վաղը այնտեղ եմ ...
Ինձ հարկավոր է, որ շատ վաստակեմ,
Իսկ մնացածը—դատարկ բաներ են....
Այո, այո,
Դատարկ բաներ...
Այո, այո,
Դատարկ բաներ...

Սա «Բարվանսարա» գործարա՞նն է: Շատ ուրախ եմ: Անունն էլ շատ համապատասխան է: Վողորմած յեղեք, ինձ ընդունեցեք աշխատանքի—վարպետ սլեսար եմ:.... (այսքան) տարվա բանվորական ստաժ ունեմ: Իսկ դուք լուծարքային վճարո՞ւմ եք:

ԲԱՆՎՈՐ.— Սա մեխանիկական գործարան չէ: Սա բրդի գործարան է: Մեզ սլեսար հարկավոր չէ, այլ միայն բրդի մասնագետ:

ԼԵՏՈՒՆ.— Տե՛ր աստված.... դե ե՛ղպես ասա:.... (այսքան) տարի այդ գործով եմ պարապում: Առաջին տեսակի մուկ վորսող եմ: Իսկ դուք լուծարքային վճարո՞ւմ եք:

ԲԱՆՎՈՐ.— Ինչպե՞ս ասել ձեզ.... մեզ հարկավոր է վոչ այնքան մուկ վորսող, վորքան տեղական ցեխի համար հաց թխող է պետք...Թեև դա համարյա միևնույն բանն է:

ԼԵՏՈՒՆ.— Աստվա՞ծ իմ,...... (այսքան) տարի հաց եմ թխում: Լավագույն հացթուխն եմ: Իսկ դուք լուծարքային վճարո՞ւմ եք:

ԲԱՆՎՈՐ.— Բայց ռոճիկը մեզանում այնքան էլ մեծ չէ:

ԼԵՏՈՒՆ.— Ռոճիկը դատարկ բան է: Մի արասի ավել լինի, բավական է: Գլխավորը փոխադրածախսն է ու լուծարքայինը... Փոխադրածախս և լուծարքային... Փոխադրածախս ու լուծարքային....



ԲԱՆՎՈՐ.— Ինչ թռչուն է՛...Տեսա՞ք: Մարդ հո չի, ուղղակի դեղձանիկ... Վորը բռնեց, են էլ լավ: (Հանդիսականներին) Ընկերներ, դեղձանիկներին վանդակների մեջ փակեցեք: Դեղձանիկի փետուր հագած, թռչում են ապակուլակացված կուլակներ: Գործարանը նրանց համար բարվանսարա չէ: Լետունը գործարանում ձրիակեր և ավազակ մարդ է: (Գրկում է նրան ու նստեցնում վերահսկիչ բուդկայի մեջ: Լետունի թևերը պոկվում են, վայր են թափվում պուտյովկաներ, աքսիներ, զապիսկաներ):

ԼԵՏՈՒՆ.— (Աշխատում է ազատվել նրա ձեռքից, գոչում է) Արասինե՛ր.... Փոխադրածա՛խս... Լուծարքայի՛ն...

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— (Ավելում է, յերգելով)

Մաքրիր, ավել, աղբը հանիր,
Գործարանից դուրս թափիր:
Ով կոպեկի հոգսն է անում,
Նա տեղ չունի մեր շարքում:
Ջան իմ ավել, ավել, ավել,
Մարդի ճյուղից ցախավել:
Աղջկերքը վոնց են կապել,
Իսկ յես՝ կարմիր վարդ կարել:

ԲԱՆՎՈՐ.— Նու, հիմա վորսանք հարբեցողին:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Հետաքրքիր է, նրան ինչով ես դրավելու:

ԲԱՆՎՈՐ.— Հարբեցողի՞ն: Ջերմաչափով: Պրծած բան է: (Կախ է անում մի իսկայական ջերմաչափ: Սնդիկը կանգնել է 40 աստիճանի վրա):

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Ինչո՞ւ ջերմաչափով:

ԲԱՆՎՈՐ.— Ինչո՞ւ, ինչո՞ւ: Յես քեզ համար անկետա յեմ, ի՞նչ: Սպասիր, կտեսնես ու կհամոզվես: (Մտնում է հարբեցողը) Տեսնո՞ւմ ես, չուշացավ:

ՀԱՐԲԵՑՈՂ.—Քառասուն աստիճա՞ն:Բիչմիչի արա՞ղ: Իմ պաշտե՛լի՛ արա՛ղ... Բայց ինչո՞ւ շշի մեջ չի: Յեվ ինչո՞ւ փեչատ չունի:

ԲԱՆՎՈՐ.— Սա յել «ինչու, ինչու»: Ինչ տալիս են, խմիր:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Իսկ դա ի՞նչ է, արա՞ղ:

ԲԱՆՎՈՐ.— Վոչ, սնդիկ:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Իսկ դա խմո՞ւմ են:

ԲԱՆՎՈՐ.— Խմում են:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Բաժակո՞վ, թե ռյումկո՞վ:

ԲԱՆՎՈՐ.—Ինչով ուզես:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Սիրում եմ բաժակով խմել: (Յերգում է)
Բաժակները թրաչ–թրաչ,
Սեղանիցը թռան ցած...

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Իսկ սա չե՞ս ուզում: (Բռունցք է ցույց տալիս):

ՀԱՐԲԵՑՈՂ.— Իսկ դա խմո՞ւմ են:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Խմում են:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Խմո՞ւմ են: Տուր:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Մոտ արի:

ԲԱՆՎՈՐ.— Մի հատ վոր ըսենց տամ, կչոքես:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Դուք ի՞նչ ա, կռի՞վ եք անում: Ուզում եք բանվորի՞ ծեծել: Ահա իմ պրոլետարական կուրծքը...Ո՞ւմ հետ եք կռվում: Ինչո՞ւ չեք կռվում:

ԲԱՆՎՈՐ.— Արդֆինպլանի համար:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Արդֆինպլա՞ն: Իսկ դա խմո՞ւմ են:

ԲԱՆՎՈՐ.— Վոչ, կատարում են:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Վոր չեն խմում, նշանակում ա չարժի նրա համար կռիվ անել: (Յերգում է)
Պլանի համար չարժե կռվել,
Չարժե իզուր գլուխ պատռել:
Լցրու խմենք, կուշտ–կուշտ խմենք,
Լավ տղերքի մերը հիշենք:
Կուզեք իսկույն միջնորդ կանչեք
Յեվ ձեր առաջ վեճը պարզենք,
Վո՞ր բանն է մեզ շատ հարկավոր,
Զեմֆերանո՞ց, թե՞ սոցմրցում:
Գին, ջան, լցրու, մի ամաչիր,
Մնդեկ լինի, ողի, գինի...
Թող չեչ լինի, նիշը լինի,
Կաթիչ կոշի—հեչ չեմ թողնի:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.—(Տալիս է շիշը) Խմիր:

ՀԱՐԲԵՑՈՂ.— (Շիշը շուռ է տալիս բերանին: Շշի միջից դուրս է գալիս մի թուղթ) Իսկ սա խմո՞ւմ են:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.—Վոչ, դա կարդում են:

ՀԱՐԲԵՑՈՂ.— Բանը նրանումն ա, վոր յես կարդալու մեջ անուսում եմ: Սաղ թվաբանությունից մենակ գրադասներն ա միտս մնացել:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Տուր յես կարդամ: (Կարդում է) Հարբեցողների պատճառով մեր գործարանում ավելացել է բրա-



կը, հասնելով յերեք (անել տվյալ ձեռնարկության բրակի տոկոսը) տոկոսի: Գործարանը բրակի հետևանքով 10.000 ռուբլու (անել տեղական վնասի թիվը) վնաս է կրել: Ահա նրանք—բիշմիշի արաղի հերոսները, շիշը ձեռքին վնասարարները, մեր գործարանի հարբեցողները... (Կարդում է տվյալ գործարանի հարբեցողների անուն–ազգանունները):

Հարբեցողը կամաց–կամաց սահում է ցած և քնում է:

ԲԱՆՎՈՐ.— Ինչո՞ւ յես կարդում դա:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.—Ինչպե՞ս թե ինչու: Յերկիրը պիտի ճանաչի իր հերոսներին: (Յերգում է):
Սրա նման բութիլկայի հերոսներ
Քայքայում են ինդուստրիայի պլաններ:
Կոլեկտիվից մեջ թե վոր կան խմողներ,
Գործարանը գինուն ծախող բանվորներ,
Խփի՛ր նրանց—մի՛ խնայիր պայքարում,
Վոր ել նրանք չտան վնաս մեզ յերբեք:

ԲԱՆՎՈՐ.— Սակայն, Մարո, հասարակությանը յերգերով չեն կերակրում:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Ի՞նչ կա վոր:

ԲԱՆՎՈՐ.— Ավելի լավ է յեկ վերջին նորությունները հաղորդենք:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Ի՞նչ նորություններ:

ԲԱՆՎՈՐ.—Լրագրերից: Շատ հետաքրքիր է: (Կարդում է) «Պրոֆեսոր Բիգեն Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում բաց է արել մի նոր կղզի»:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Մե՛ծ բան է արել... Հապա թող փորձի մեր գործարանում գոնե մի ժողով ժամանակին բաց անել:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ.— Ասա ընկերեմ,—այդ ինչո՞ւ հարբեցողի համար ասում են «կոպեկի խմում է, բայց մանեթի քայքայվում»:

ԲԱՆՎՈՐ.—Վոչ թե մանեթի, այլ ավելի—յերկու հարյուր միլիոն մանեթի: Դրա վրա ավելացրու հարբեցողությունից առաջացած պրոգուլների պատճառով պակաս արտադրությունը, վոր հավասար է հարյուր յերեսուն հինգ միլիոն մանեթի: Հարբեցողության հետևանքով աշխատանքի արտադրողականության անկումը յեկամուտը կրճատում

է վեց հարյուր միլիոն մանեթով: Հաշվիր, ինչքա՞ն է ըստացվում: Միլիարդ: Կես միլիարդ: Իսկ դու ասում ես մանեթ: Իսկ թե ինչու չեն ասում «քայքայվում» է, դա պարզ է: Բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները պատկանում են բանվորներին: Քայքայելով նրանց, նա քայքայում է ինքն իրեն: Հասկանալի՞ յե:

ՁԱՅՆԵՐ.— Հասկանալի յե:

ԲԱՆՎՈՐ.— Իսկ սրա համար հասկանալի չի: (Ցույց է տալիս հարբեցողին): Ի՞նչ անեմ յես սրան: Վերահսկիչ բուդկա: (փորձում է բարձրացնել) Ինչ ծանրիկ է՛ ... Հոտից մարդ կհարբի, մենակ զակուսկան է պակաս: Ինչպես յերևում է, պետք է հասարակական բուքսիրի վերցնել: (Քարշ է տալիս հատակի վրայով):

ՀԱՐԲԵՑՈՂ.—(Մնչում է) Յե–ես ի–ին–քսս... Չո–րեք–թաթ...

ԲԱՆՎՈՐ.— Չորեքթաթով սոցիալիզմի չես հասնի, ընկեր: (Ներս է տանում նրան բուդկա: Ճանապարհին հարբեցողը վայր է թափում շշեր, վարունգներ, նշեր):

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.—Վա՜խ–վա՜խ, նորից պետք է ավլեմ: (Մաքրում է, յերգելով):

*Մաքրիր ավել, խառակ մաքրիր,*
*Թե կեղտ, թե աղբ դուրս թափիր:*
*Ով վաստակը պանդոկ տանի,*
*Նա ավելով դուրս կարվի:*
*Ջան իմ ավել, ավել, ավել,*
*Դու փունջ կապած ցախավել,*
*Քեֆս եսոր շատ է ենպես–*
*Ուրախ–անհոգ դժի պես:*

(Հեռախոսի ուժգին զանգ):

ԲԱՆՎՈՐ.—(Հեռախոսի մոտ) Այո... Ի՞նչ... Բռնե՞լ: Ո՞ւմ բռնել: Տեմպե՞րը: Ի՞նչ տեմպեր: Հնգամյա՞կը: Իսկ ո՞վ է խոսում: Ախ, Տրոցկի՞ն... Վո՞չ: Ապա ո՞վ է: Ախ, աջ ուկլոնի՞ստը... Ի՞նչ, կրկի՞ն վոչ: Սխալվեցի՞ր, ասում ես: Ապակուլակացված կուլա՞կը: Սատանան ձեզ տանի: Դուք բոլորդ հիմի մի պոչ եք: Ի՞նչ, ի՞նչ: Յես քեզ ե՛նպես բռնեմ, վոր չշնչես: Ախմա՛խ, տեմպերը բռնել չի կարելի: Վոչ մի ուժ չի կարող:

ՌԱԴԻՈ.— Հանդիպական արդֆինպլանը նախատեսնում է....



(այսինչ—ասել այն գործարանի անունը, ուր տեղի յե ունենում յելույթը) գործարանի արտադրանքը հնգամյակի վերջում ավելացնել .... (ասել գործարանի հնգամյա թիվը) տոկոսով:

ԲԱՆՎՈՐ.— Լսեցի՞ր: Խոսիր Ռադիոյի հետ, նա քեզ կբացատրի:

ՌԱԴԻՈ.— Ոպորտյունիստների հետ յես խոսել անգամ չեմ կամենում:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Ճիշտ է, ընկեր Ռադիո:

(Գարմոշկա: «Միշտ վեր, շարունակ վեր»... մոտիվով նվագ: Լուսային դիագրամմա յերգի նվագի հետ շարունակ բարձրանում է վեր ու վեր, ցույց տալով գործարանի հնգամյա աճումը):

ԲԱՆՎՈՐ.— Այ, ես չեղագիծն ինչպես վոր կհանի: Նու, այժմ փորձենք նոր ձուկ վորսալ: Արի, Մարո, սիմուլյանտին կանչենք: Գրիր.— «Ամբուլատորիա ամեն տեսակ հիվանդությունների: Բյուլլետեններն այստեղ»:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Հասկանում եմ:

ԲԱՆՎՈՐ.— Յեղավ: (Կախ է տալիս հայտարարությունը: Շտապով հագնում է սպիտակ խալաթը):

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.— (Գալիս է, հենակներով, այտը կապած, գրպաններից յերևում են դեղատոմսեր) Քաղաքացի բժիշկ... օգնեցեք: 1905 թվից հիվանդ եմ. սիրտս թրթռում է:

ԲԱՆՎՈՐ.—Ասում եք՝ թրթռո՞ւմ է: (Թխկթխկացնում է թակիչով) Իսկ ինչո՞ւ յեք հենակներով: Վոտքերիդ ի՞նչ է պատահել:

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.— Ո՜խ, մի հարցնեք: Կրունկներս յետևի կողմից են: Ինչքան բժշկվում եմ, բան դուրս չի գալիս: Հենց այդպես էլ մնում են յետևի կողմը:

ԲԱՆՎՈՐ.— Իսկ քիթդ ատամից է: Զարմանալի յե, չա՜տ զարմանալի: Առաջին անգամ եմ այդպիսի հիվանդ տեսնում:

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.—(Տոնը փոխելով) Ձեռք մի առ ինձ, ախպեր ջան: Կասե՞ս դու յել—առաջի՞ն անգամ... Ամեն որ այստեղ եմ, կարծես չես ճանաչում: Մաթոս Թաթոսովին ո՞վ չի ճանաչում: Մաթոս Թաթոսովին ճանաչում ա ամեն մի բացիլ, ամեն միկրոբ, ամեն ակուշերկա... Տղամարդկանց բժիշկներից վոր բան դուրս չի գալիս, կանանց բժիշկների մոտ եմ գնում: Ու միշտ էլ բանս մի կերպ սարքվում է: Դե, փեչատը դիր: Բյուլլետեն յես միշտ մոտս պատրաստ ունեմ (Յերգում է).

Հիվանդանոց, բժշկի տուն
Ջրի ճամփա ինձ համար,
Գիշեր-ցերեկ, քուն թե արթուն,
Յես տեսնում եմ բյուլլետեն:
Ամեն տեսակ հիվանդությամբ
Յես կարող եմ տառապել,
Գիշեր-ցերեկ, քուն թե արթուն,
Յես տեսնում եմ բյուլլետեն:
Թե վոր դրանք հերիք չի ձեզ—
Հենակով եմ յես արդեն,
Ու մի աչքս էլ փառ է բռնել—
Տվեք, տվեք բյուլլետեն:
Իսկ այստեղից ուղիղ վազքով
Յես կգնամ գինետուն,
Հաստատ քայլով, սուր հայացքով,
Ինչպես «հիվանդ» խոխական:
Հնգամյակի հոգսը ինձ ինչ.—
Իմ բանն է— ծուլություն:
Ռեցեպտ պետք չէ, խորհուրդ պետք չէ—
Տուր ինձ միայն բյուլլետեն:

ԲԱՆՎՈՐ.— Առ: (Տալիս է մի թուղթ):

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.— Սա ի՞նչ է: Ռեցե՞պտ: Հասկանո՞ւմ ես դու, խելքի տոպրակ, վոր ամեն մի ջեբումս հարյուր հատ ռեցեպտ ունեմ: (Գրպաններից դուրս է թափում դեղատոմսերի հեղեղ, թղթի անձրեվ) Ըսկի իմանո՞ւմ ես, լաբորատորիան ունես, վոր ինձ համար գրած կաթիլներից ու դեղերից մի սաղ Սևանա լիճ կգոյանա: Իսկ դու ինձ ռեցեպտ ես գեմ անում:

ԲԱՆՎՈՐ.— Ձե, դու այնուամենայնիվ կարդա:

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.— Ի՞նչ գրողի է հարկավոր քո լաթիներեն չանչերը:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Տուր յես կարդամ: (Կարդում է) Մաթոս Թաթոսովին (կամ տեղական սիմուլյանտի անուն ազգանունը) ամեն որ ինքնաքննադատության դալար ճիպոտներ: Տալ ուկոլ գործարանի..... (այսինչ-տեղական պատի լրագրի անունը) պատի լրագրում: Շատ օգտակար է թարմ օդը— գործարանի դարպասից դուրս:

ԲԱՆՎՈՐ.— Իսկ այժմ մենք քեզ կվերցնենք ստացիոնար բժշկության:



ՍԻՄՈՒԼՅԱՆՏ.— Քաղաքացինե՛ր, ընկերնե՛ր... Սա ի՞նչ բան է: Հիվանդ մարդու տանջում են: Ե՛յ, բարեկամներ, Մուկուչ, Վանուչ, (տեղական սիմուլյանտների անունները), հասեք օգնության... Դուք էլ ինձ նման սիմուլյանտներ եք: Գթացեք: (Վայր է գցում հենակները, դեղատոմսեր, նկատողություններ):

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Ով ինչ անի-անի, իսկ յես պիտի մաքրեմ: Ե՛խ, սա ինչ կյանք է: (Մաքրում է, յերգելով)
Մաքրիր ավել, խառակ մաքրիր,
Թե կեղտ, թե աղբ դուրս թափիր:
Սիմուլյանտին դու անխնա
Դուրս շպրտիր-էլ չգա:
Հեյ ջան ավել, ավել, ավել,
Ծակող, ծակող փշփշոտ,
Ձեռք չտաք ինձ, թե չէ յես էլ
Դաղել գիտեմ վզակոթ:

ԲԱՆՎՈՐ.— Հը՞, վո՞նց է, լավ եմ վորսում յես նրանց, չէ՞:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Խոսք չկա: Ավելի լավ, քան իշխան ձուկ մթերողները: Նրանք ինչ վոր բռնում են, իրենք էլ ուտում են: Բայց ասա խնդրեմ, այդ ո՞ւմ համար են ասում, թե «նրանից ավազ է թափվում»:

ԲԱՆՎՈՐ.— Պարզ է, մնացորդների համար: Էդ նա յէ, վոր շաբաթական ուզում է պաշտպանիկների տակ ավազ լցնի: Իդեպ, մենք նրան հենց ավազով էլ կփորսանք: (Ավազ է լցնում) Գալիս է...

ՎՆԱՍԱՐԱՐ.— (Գալիս է զգույշ, գաղտագողի)
Իմ տերը պատվեր տվեց,
Վոր խանգարեմ յես սրանց,
Դրսից լույս, հրու լինեմ,
Իսկ ներսը դա-քայքայեմ:
Հանկարծ մի տեղ լարը կտրեմ,
Փոկը տեղ-տեղ ծակծկեմ...
Ծխախոտս յես անզգույշ,
Պահեստի մեջ վայր գցեմ:
Իմ տերը ինձ պատվեր տվեց...
Իմ տերը ինձ պատվիրեց....

Հի՛-հի՛-հի՛... Ավա՜ղ.. Ի՞նչ նպատակով է բերած:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Պարզ է ինչ նպատակով: Շինարարության համար:

Библиотека ИНСТИТУТА



3678-82

ՎՆԱՍԱՐԱՐ.—Ընենց մի լավ բան եմ մտքով արել կատակի համար...

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Հապա ասա, յես էլ ծիծաղեմ:

ՎՆԱՍԱՐԱՐ.— Վերցնես ես ավազից ու մի փոքր պադշիպնիկների տակ լցնես... Գործարանը կանգ կառնի...

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Լավ կատակ է, խոսք չկա: Չէ՞ որ դա կոչվում է վնասարարություն:

ՎՆԱՍԱՐԱՐ.— Ինչ վնասարարություն: Գործարանը մի առժամանակ կանգ կառնի, իսկ մենք, բանվորներս կհանգստանանք: Դրանից մեզ ի՞նչ վնաս... Մենք մեր ռոճիկը կըստանանք:

ԲԱՆՎՈՐ.— Այս տեսակ անզգամի հետ խելք խոսել էլ չարժե: Մարշ:

(Վնասարարն ինքը վազում է վերահսկիչ բուդկա):

ՌԱԴԻՈ.— Ալլո: Ալլո: Ալլո:..... (այսինչ-առել այն գործարանի անունը, ուր տեղի յե ունենում յելույթը) գործարանում հայտնաբերված է վնասարարների և հակահեղափոխականների մի խմբակ, վոր փորձ էր անում կանգնեցնել ինդուստրացման հզոր թափը: Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր սեպտեմբերի յերեքի դիմումի մեջ, ուղղված բոլոր կուսակցական, տնտեսական, արհմիութենական և կոմյերիտական կազմակերպություններին, ասում է.—«Չնայած արտադրական խնդիրների կենսագործման ընթացքում գոյություն ունեցած խոշոր թերություններին, սոցիալիզմի կառուցումը հաղթականորեն առաջ է ընթանում, իր ճանապարհին անխնա խորտակելով դասակարգային թշնամու դիմադրության ամեն տեսակ փորձեր — կուլակների, հակահեղափոխական վնասարարների, բուրժուական ռեստավրատորների, նույն թվում նաև Գրոմանի, Կոնդրատյեվի, Սուխանովի տիպի մարդկանց: Արդֆինպլանը վտանգի տակ է գտնվում: Դրանով իսկ վտանգի տակ է դրվում հնգամյակի յերրորդ տարվա ծրագիրը: Հանենք դրանից բոլշևիկյան յեզրակացություն.— կուսակցության բոլոր ուժերը, բանվոր դասակարգի բոլոր ուժերը համախմբենք հնգամյակի յերրորդ տարվա ծրագիրն ապահովելու:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Կիրագործե՞նք:

ՁԱՅՆԵՐ.— Կիրագործե՛նք:



ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Այ, հարկավոր է միայն աղբը դուրս թափել: (Ավելում է, յերգելով):

Մաքրիր ավել, մի ափսոսիր,
Աղբը հանիր, դուրս թափիր:
Վնասարար հերոսներին
Իրենց տեղը ցույց տուր դու:
Հեյ ջան ավել, ավել, ավել,
Թեվ ու թիկունք ակտիվին·
Իզուր չէ, վոր աչք եմ դրել
Բլուզավոր են տղին:

ԲԱՆՎՈՐ.— Մարո, մի քիչ ոպխում չկա՞ մոտդ:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Այդ արդեն պետք է յերեցփոխ Պետրոսից հարցնել (կամ մի այլ, ծանոթ անուն): Ոպխումի առևտրով նա յե պարապում: Իսկ ինչի՞դ է հարկավոր:

ԲԱՆՎՈՐ.— Հարկավոր է: Ուզում եմ աստվածապաշտներին փորսալ, նրանց, վորոնք շատ են սիրում յեկեղեցական տոներ, վոր աշխատանքի չգան:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Փորձիր սրբի պատկերով: Կլինի՞:

ԲԱՆՎՈՐ.— Ճշմարիտ է: Բայց սրբի պատկեր վո՞րտեղից վերցնեմ: Գնամ թանգարա՞ն:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Սպասիր, դաա: (Բերում է Լեվ Տոլստոյի նկարը):

ԲԱՆՎՈՐ.— Սա հո Լեվ Տոլստոյի պատկե՞րն է:

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— Վնաս չունի: Աստվածապաշտի համար միենույն է, թե ում առաջ աղոթք անի: (Կախն են տալիս նկարը, առաջը մոմեր են վառում):

ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆ.— (Գալիս է, յերեսը խաչակնքելով) Տեր վողորմյա, տեր վողորմյա, տեր վողորմյա... Ես ի՞նչ ա, թազա սուրբ ա լույս ընկել:

ԲԱՆՎՈՐ.— Նոր չի: Սա շատ հին սուրբ է:

ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆ.— Անունը վո՞նց ա:

ԲԱՆՎՈՐ.— Սուրբ Լևոն:

ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆ.— Ներիր ինձ, սուրբ տեր, յերբեք քեզ ծունր չեմ դրել:

ԲԱՆՎՈՐ.— Այո, շատ մեծ մեղք ես գործել: Դե, գնա աղոթք արա նրա հետ այնտեղ: (Հրում է նրան վերահսկիչ բուդկա):

ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆ.— Ես ո՞ւր ես խոթում ինձ, անիծյալ բեհզեբուղ: Տեր վողորմյա, տեր վողորմյա, տեր վողորմյա...

(խաչակնքում է յերեսը, վայր թափելով սրբապատկերներ, ճշխարքներ):

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— (Մաքրում է, յերգելով)

*Մաքրիր ավել, խոտակ մաքրիր,*
*Աղբը հանիր, դուրս թափիր:*
*Նա, ով սրբից ձեռք չի քաշում,*
*Նա տեղ չունի մեր գործում:*
*Հեյ ջան ավել, ավել, ավել,*
*Դարեր ճիպոտ մաքրենք,—*
*Աղջկերքը փոնց են կապել—*
*Իսկ լեռ–կաղմիր վարդենի:*

ԲԱՆՎՈՐ.— *Պատկերը լրիվ լինելու համար պակասում է միայն մեր «արթուն աչքը»—մեր գործարկոմը: Թեև նրան ամենից ավելի հեշտ է փափուկ բարձով հրապուրել:* (Դըրնում է բարձը):

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— *Յես նրա համար հատուկ յերգ գիտեմ: Խոսքը սարքագրել ա Հովհաննյանը, իսկ յերաժշտությունը՝ Մոցարտը:* (Յերգում է)

*Ննջիր բալիկ, դու անվրդով...*
*Տեմպերն իրենք թող առել...*

(Գալիս է քնկոտ Գործարկոմը, դանդաղ նստում է բարձին ու խռմփացնում):

*Գործարանի պլաններն էլ*
*Կկատարվեն վատ թե լավ:*
*Իսկ դու քնիր,*
*Դու քնիր...*
*Բարձրանում են շենքերն արդեն,*
*Կորպուսները շարք կանգնում,*
*Մեծանում են հա մեծանում:*
*Իսկ դու քնիր քո պոստում...*
*Քնիր անուշ...*
*Քնիր մուշ–մուշ...*
*Շատ ես հոգնել աշխատանքից,*
*Զուրկ մնացել վայելքից:*
*Դե, սիրելիս, հանգստացիր,*
*Ինչ գործ ունես եդ ցավից...*
*Քնիր անցավ,*
*Որը անցավ...*



ԲԱՆՎՈՐ — *Քնեց: Հիմի էլ նրան փոշ մի ահազանգով արթնացնել չի լինի: Ե՛ս դու, «արթուն աչք»...*

(Ահազանգի սիգնալ: Զանազան տեղերում լուսավորվում են տրանսպարանտներ — «*Ահազանգ, ահազանգ, ահազանգ*»: Ներս է վազում Հանդիպական Արդֆինպլանը):

ՀԱՆԴԻՊԱԿԱՆ.—

*Ցեխ, սառնոկ պղպղում են հարվածային,*
*Ուրախ–զվարթ ու յերջանիկ աշխատանքում.*
*Տաքցարերած տեմպերը մեր հեքյաթային.*
*Չկա յերբեք մեր տեմպերը վողջ աշխարհում:*
*Սակայն ի՞նչ... Ո՞վ հանդգնեց հնոցը վառ,*
*Այն ո՞վ գտեց մատորն հուժկու, մատորը մեր,*
*Ո՞վ ստեղծեց «ճեղքվածք», «բացեր», «թերացումներ»*
*Այն ո՞վ,*
*Այն ո՞վ,*
*Այն ո՞վ,*
*Այն ո՞վ...*

ԲԱՆՎՈՐ.—(Բաց է անում վերահսկիչ բուդկան) *Սրա՛նք:*

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— *Սրա՛նք:*

ԲԱՆՎՈՐ.— *Բռնե՛ք:*

ՀԱՎԱՔԱՐԱՐՈՒՀԻ.— *Հայդա, դո՛ւրս:*

(Դուրս են գալիս ԼԵՏՈՒՆԸ, ՀԱՐԲԵՑՈՂԸ ՍԻՄՈՒԼՅԱՆՏԸ, ՎՆԱՍԱՐԱՐԸ, ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ԿԻՆԸ, շարք են կանգնում: Պարում են, յերգում միասին):

*Այո, մենք ենք, մենք հանցավոր—*
*Անկեղծ կասենք–չենք թաքցնում.*
*Զուր չէ մեր դեմ պայքար մղում*
*Հարվածային,*
*Բանբրիգադ,*
*Թատրոն, կինո*
*Ցեխ լրագիր:*
*Այո, մենք ենք,*
*Այո, մենք ենք:*
*Գիշեր–ցերեկ միշտ անդադար*
*Աշխատում է մեր գործարան,*
*Իսկ մենք բուդկում վերահսկիչ*

Հղացել ենք
Վնասարար
Ու խայտառակ
Մի շուրջապար։
Այո, մենք ենք,
Այո, մենք ենք։

(Դուրս է գալիս ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԸ, շարվում է բուրգաձև)։

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴ.—

Մենք պրոպագանդի կուռ մարտիկներ,
Միաձույլ ցեխ—մի կամքի տեր։
Կապույտ բլուզ—մեր զարդարանք,
Ստանոկ-մաշին—մեր դեկորներ։
Պողպատի պես թող շողշողա
Զնգուն ծիծաղ գործարանում,
Արձագանգի կորպուսներում,
Բազմահազար կամարներում։
Մեր թատրոնը ցեխ է նույնպես,
Ամուր կապված գործարանին.
Մեր խոսքերը նետերի պես
Հարվածում են ծույլին—թույլին։
Վնասարար և հարբեցող,
Գժլող—փախչող ու թրևող
Մի՛շտ յենթակա մեր սուր բառին,
Քննադատող սուր սլաքին։
Միահամուռ կամքով հզոր
Դիմավորենք յերրորդ տարուն,
Արդֆինպլանի թվեր բոլոր
Մենք կատարենք միշտ աննկուն։
Գործարանից վոչ վոք, վո՛չ վոք
Չի հեռանա, մնա անհոգ—
Մինչ կատարումն հնգամյակի,
Մենք կցվում ենք ստանոկի։
Յեկեք առնենք ծանր մուրճեր
Ու խորտակենք անցյալ կյանքի
Սովորության բորբկածներ,—
Ապահովենք վերելքը մեր։
Բոլորս մենք մարտիկներ ենք



Աշխատանքի այս ֆրոնտում,
Բոլորս մեկ, մի օղակ ենք
Հարվածային բրիգադում։
Աշխատանքով, ճիշտ թվերով
Ջախջախենք մենք թշնամուն մեր,
Յեվ պայքարի զոռ մարտերով
Յեռապատկենք ուժերը մեր։
Ծափերի տեղ թող դղրդան
Գործարաններ,
Ֆաբրիկանե՛ր,
Կառուցումնե՛ր։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0303842

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1½ մ.)

12068

П. МАЙСКИЙ

КОНТРОЛЬНАЯ БУДКА

Пьеса в 1 д.

Госиздат ССР Армении
Эривань — 1931

891.71
И-23